ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

«24» 02 2016 թ. № 5/13/5100-16

ՀՀ, Երևան-0001, Աբովյան 9
հեռ./ֆ.՝ (+374 11) 526-529
էլ. փոստ՝ msy@msy.am
էլ. կայք՝ www.msy.am

Ձեր 2016 թ. փետրվարի 23-ի № 268-ի 6 գրության

«Ինֆորմացիայի ազատության կենտրոն»
հասարակական կազմակերպության
նախագահ Լ. Դոյդոյանին

Հարգելի՛ տիկին Դոյդոյան

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) 2016 թվականի հունվարի 1-ից առ այսօր ստացել է տեղեկատվություն տրամադրելու երկու էլեկտրոնային հարցում, որոնք գրանցվել են «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգում, և դրանց գրավոր պատասխանվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ու ժամկետներում:

Տեղեկատվություն տրամադրելու վերաբերյալ բանավոր (այցելության և հեռախոսազանգի միջոցով) հարցումներին պատասխանվել է անմիջապես կամ ողջամիտ ժամկետում, սակայն դրանց վերաբերյալ առանձին հաշվառում չի վարվել:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ Նախարարության ինտերնետային կայքի միջոցով դիմողները հնարավորություն ունեն հարցումներն ուղարկել առցանց՝ «Հետադարձ կապ» և «Ուղարկել նամակ» բաժինների միջոցով (**http://msy.am/hetadardz-kap.html**, **http://msy.am/ougharkel-namak.html**):

Հայտնում եմ նաև, որ Նախարարության ինտերնետային կայքն ունի «Հաճախակի տրվող հարցեր» բաժինը (**http://msy.am/hachakhaki-trvogh-harcer.html**), որտեղ ամփոփվում և պարբերաբար թարմացվում է հաճախակի տրվող հարցերի պատասխանները:

Հարգանքով՝

աշխատակազմի ղեկավարի
ժամանակավոր պաշտոնակատար Վ. Էլոյան

Կատարող՝ տեղեկատվության և հասարակայնության
հետ կապերի բաժին
Անուշ Չիթչյան, հեռ .՝ (011) 54-69-33